

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԵՍԱՐԻՈՅ ԳԱԻԱՌԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԷՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան Գահիրէի Վարչութիւնը, նախանձախնդիր հայ մշակոյթի պահպանման եւ յաջորդ սերունդներու փոխանցման, ներկայիւս հրաւէր կը կարգայ հայ բանասէրներուն, ուսումնասիրել եւ գրի առնել՝

- Ա. Հայ Կեսարիոյ պատմական անցեալը — Կեսարահայութեան ծագումը:
- Բ. Կեսարիոյ եւ Շրջակայ գիւղերու բարքերն ու սովորոյթները:
- Գ. Հայաստան շրջաններու բարբառի մասին ծանօթութիւններ:
- Դ. Տեղեկութիւններ՝ Կեսարացի հայ Աշուղներու կեանքին եւ գործերու մասին:
- Ե. Արուեստներ եւ մշակոյթ:
- Զ. Արհեստներ եւ վաճառականութիւն:
- Է. Կրթական հիմնարկութիւններ եւ վիճակագրական տեղեկութիւններ անոնց մասին:

Ը. Կրթական մշակներ եւ ազատ արուեստի հետեւող աչքառու դէմքեր եւ անուանի հրապարակագիրներ:

Թ. Քաղաքական կուսակցութիւններ եւ բարեգործական եւ այլ Միութիւններ:

Ժ. Յարանուանութիւնները Կեսարիոյ մէջ:

ժԱ. Թուրք եւ այլ պետութեանց ծառայութեան մէջ գտնուած բարձրաստիճան Կեսարացիներու, ինչպէս նաեւ արտասահմանի մէջ բարձր դիրքերու արժանացած Կեսարացի եւ կամ Կեսարացի ծնողքէ սերած անձնաւորութեանց մասին կենսագրական տեղեկութիւններ:

Մէկ խօսքով բովանդակ Հայ-Կեսարիոյ գաւառին ամփոփ մէկ պատմութիւնը:

Վարչութիւնս յատկապէս այս գործին համար պիտի կազմէ հայ պատմութեան եւ գրականութեան հմուտ երեք հոգիէ բաղկացեալ Յանձնախումբ մը Գահիրէի մէջ, որուն գնահատութեան արժանացած երկասիրութիւններէն Ա.ը պիտի ստանայ 2000. Բ.ը 1000. Ժակ Գ.ը 500 Ֆրանսական Ֆրանք պարգև:

Յառաջիկայ թիւերիմացութիւններէ խուսափելու համար ըսենք թէ՛ գնահատութեան արժանացած Բ. եւ Գ. երկասիրութիւններէ գլուխներ վերցնելով առաջինը աւելի եւս ճոխացնելու իրաւունքը պիտի ունենայ Վարչութիւնը:

Տպագրութեան ծախսը պիտի հոգայ Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան Գահիրէի Վարչութիւնը: Տպուած գիրքերէն ալ 10ական օրինակ պիտի յատկացուն հեղինակներուն:

Ձեռագիրները, ինչպէս նաեւ գրքին բովանդակութեան հետ աղերս ունեցող պատկերները, պէտք է ղրկուին Յանձնախումբի անունին, առանց ստորագրութեան, միայն ծածկանունով. իսկ հեղինակներ իրենց անուն մականուն եւ հասցէն պարտին ղրկել զատ պահարանով:

Ձեռագիրները պէտք է հասնին ամենաուշը մինչեւ յառաջիկայ 1932 Մայիսի վերջը:

Ի գիմաց Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական
Միութեան Գահիրէի Վարչութեան՝
8, Յուլիս 1931
Գահիրէ
Մտննադպիր
Մտննապետ
(ԿԵԻԸ)
ՄԱՆՈՒԷԼ ՊԵՅԼԷՐԵԱՆ
ԲԻԷԶԱՆԴ ԹԷՔԷԵԱՆ
Հասցէ՝

Union des Compatriotes de Césarée et des Environs
B. P. No. 210 Le Caire (Egypte)

ԱԶԳԱՊԱՏՈՒՄ Ա. Բ. ԵՒ Գ. ՄԱՍ

Նկատելով թէ հանգուցեալ Տ. Մաղափա Արեհայ. Օրմանեանի այս հոյակապ աշխատութեան Գ. Մասը (Երուսաղէմ տպուած) զնուներէն շատեր կը ցանկան ունենալ նաեւ նոյնին Կ. Պոլիս տպուած Ա. եւ Բ. Մասերը, Ս. Աթոռոյս Վարչութիւնը ամբողջութեամբ ծախու առաւ այդ հասօրները եւ փոխադրեց Երուսաղէմ:

Այժմ ԱԶԳԱՊԱՏՈՒՄԻ ԵԵԼԲ հասօրներուն կեդրոնացեալին ըլլալով Ս. Աթոռոյս Տպարանը, զանոնք ունենալ փափաքողները կրնան դիմել հետեւեալ հասցէին.

Imprimerie du Patriarcat Arménien, JÉRUSALEM, Palestine

Գինն է՝ ամէն մէկ հասօրին մէկ Անգլ. սթրլին կամ 5 Տօլար:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՆԿԱՐԱԳԻՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ

գրեց՝ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԱՍ ՕՐՄԱՆԵԱՆ

Վարչական Պատուիրակի պաշտօնով Երուսաղէմ իր բնակութենէն օգտուելով՝ երջանկալիւսասակ Տ. Օրմանեան Սրբազան 1915ին գրած է այս հասօրը, որ տասներօրը զլուխներու կամ 151 հասուածներու մէջ կը բովանդակէ Ս. Յակոբեանց տաճարին ու վանքին եւ յարակիցներուն մանրամասն նկարագրութիւնը, ինչպէս նաեւ նկարագրութիւնը Ս. Հրեշտակապետաց եւ Ս. Փրկչի վանքերուն: Ունի առանձին տեսութիւններ Երուսաղէմի Աթոռին վարչական, վանական, եկեղեցական եւ ուսումնական կեանքին եւ այդ երջանին տիրող վիճակին վերաբերմամբ:

Հոգեւոյս Հեղինակին անունը գրաւական մըն է գործին շահեկանութեան, եւ տարակոյս չկայ թէ սիրով եւ հանդիմով պիտի կարդացուի ներկայ հասօրս բարեպաշտ ուխտաւորներու եւ Հայկական Երուսաղէմով հետաքրքրուող մերազնեից կողմէ:

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐԲԵՐ

ԵՌԱԶԱՅՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

(ՍՐԱԿԱՆ ԽՈՒՄԵՒ ՀԱՄԱՐ)

1. Մ. ԶԻՂԻՆԿԻՐԵԱՆԻ

46 երես՝ մախուր եւ յսակ վիմասխալ, 8°.

Այս գործը պատրաստուած է տեղական գործածութեան համար՝ եւ անոր մէջ կը պակսին գործիական երաժշտութեան ձայնագրութիւնը եւ դպիրներու բաժինէն զատ միւս մասերը: Բայց որովհետեւ աւելի օրինակներ տպուած են՝ փափաքողներուն կը վաճառուի ՄԷԿՈՒԿԼՍ շինին: Գիմել՝

Imprimerie du Patriarcat Arménien JÉRUSALEM

Ք Ի Չ Մ Ը Ե Ր Կ Ի Ն Ք

ՂԱՀՐԱՄ ՍՕՑԵԱՆ

1931, Նիւ Եօրկ. Երես 60. գին մէկ զովար.

Հայրենաշունչ ինքնուածներու գեղեցիկ հասար մը:

ՏԱՐՕՆԻ ԱԾԽԱՐՀ

(ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ)

ԳԵՂԱՄ ՏԷՐ - ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Հրատարակութիւն՝ «Նահասակ Գրագէտներու Բարեկամներ»-ու.

Մասենաւար քիւ 3, երես 340, Տպգ Պարխա. 1931

Դաւառական գրականութեան շաւագոյն էջեր՝ արտատպուած:

ԹԵԻԱԿՈՐ ԶԻՆ (ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ) Հեղ. Հ. ՀԱՆԹՈՐՆ, ՊԱՀՈՄ
(Մարդ մը որչափ հողի պէտք ունի) Հեղ. ՅՈՒՍԵՊ ԹՐԳ. 1. Գ. ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ.
Պատահիկն Դրադարանը, Հասարներ Թիւ 3 եւ 4. Երես՝ 24 եւ 35. Գին՝ իւրաքանչիւրը 1
եգ. Դան. Տպգր. Սահակ-Մեւրոպ, 25 Ch. Tewfik, Դանիք: